# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**28 դեկտեմբերի 2015 թվականի N 356-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 441 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 5-րդ մասի, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 1153-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2009 թվականի դեկտեմբերի 30-ի <<*Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին*>> N 441 որոշմամբ հաստատված N 10 հավելվածի ***(ծածկագիր՝ 66-2.1-2)*** 10-րդ կետի <<ա>> ենթակետից հանել <<***շինարարություն և ճարտարապետություն մասնագիտությունների գծով***>> բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**2015 թվականի դեկտեմբերի 28**
**ք. Հրազդան**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ | Ֆինանսական աուդիտ | 5 | 01/12/2016 | 30/12/2016 | Կազմակերպության կողմից կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության գնահատում | Գրիգորյան Արամ | Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ | 1 |
| | | | | | | Կազմակերպության հաշվեկշռում գտնվող գույքի (տարածքի) վարձակալությամբ տրամադրման, վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացների գնահատում | Ռուստամ Մկրտչյան | Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ | 1 |
| | | | | | | Կազմակերպության կողմից լիազոր մարմնին ներկայացված կոմպլեկտավորման վերաբերյալ տվյալների հավաստիության գնահատում | Կոմիտաս Հունանյան | Ներքին աուդիտի բաժնի պետ | 1 |
| | | | | | | Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացի գնահատում | Ստեփանյան Անահիտ | Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ | 2 |
| | | | | | | Գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության գնահատում | Ստեփանյան Անահիտ | Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ | 3 |
| | | | | | | Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների հաշվարկման և վճարման գործընթացի գնահատում | Գրիգորյան Արամ | Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ | 2 |